Երկրորդ ընթերցում
Նախագիծ
Լրամշակված տարբերակ

Կ-006[1]-24.05.2017-ՊԻՄԻ-011/2

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԸ «ՊԵՏԱԿԱՆ ՊԱՇՏՈՆՆԵՐ ԶԲԱՂԵՑՆՈՂ ԱՆՁԱՆՑ ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Պետական պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության մասին» Հայաստանի Հանրապետության 2013 թվականի դեկտեմբերի 12-ի ՀՕ-157-Ն օրենքի (այսուհետ՝ օրենք) 2-րդ հոդվածի 3-րդ մասում՝ «ղեկավար-նախարարը» բառերը փոխարինել «ղեկավարը» բառերով:

Հոդված 2. Օրենքի հավելված 1-ում՝

1) «ՀՀ Ազգային ժողովի աշխատակազմի ղեկավար» բառերը փոխարինել «ՀՀ Ազգային ժողովի աշխատակազմի ղեկավար-գլխավոր քարտուղար» բառերով, իսկ նույն տողում «10.00» թիվը փոխարինել «12.00» թվով.

2) «ՀՀ Ազգային ժողովի աշխատակազմի ղեկավարի առաջին տեղակալ» տողում «9.00» թիվը փոխարինել «10.00» թվով.

3) «ՀՀ Ազգային ժողովի աշխատակազմի ղեկավարի տեղակալ» տողում «8.00» թիվը փոխարինել «8.50» թվով.

4) «ՀՀ կառավարության աշխատակազմ» բաժինը շարադրել նոր խմբագրությամբ.

«

ՀՀ կառավարության աշխատակազմ	
ՀՀ կառավարության աշխատակազմի ղեկավար	12.0
ՀՀ կառավարության աշխատակազմի ղեկավարի առաջին տեղակալ	10.00

ՀՀ կառավարության աշխատակազմի ղեկավարի տեղակալ	8.50
ՀՀ վարչապետի գլխավոր խորհրդական	10.00
ՀՀ վարչապետի վերահսկողական ծառայության ղեկավար	9.50
ՀՀ վարչապետի խորհրդական	9.50
ՀՀ վարչապետի ավագ օգնական	8.50
ՀՀ վարչապետի օգնական	8.00

Հոդված 3. Օրենքի հավելված 2-*ում*՝

1) «ՀՀ Ազգային ժողովի աշխատակազմի ղեկավարի խորհրդական» տողում «4.50» թիվը փոխարինել «5.50» թվով.

2) «ՀՀ Ազգային ժողովի աշխատակազմի ղեկավարի օգնական» տողում «4.00» թիվը փոխարինել «4.50» թվով.

3) «ՀՀ կառավարության աշխատակազմ» բաժինը շարադրել նոր խմբագրությամբ.

«

ՀՀ կառավարության աշխատակազմ	
ՀՀ վարչապետի մամուլի քարտուղար	8.0
ՀՀ վարչապետի ռեֆերենտ	6.00
ՀՀ կառավարության աշխատակազմի ղեկավարի խորհրդական	5.50
ՀՀ կառավարության աշխատակազմի ղեկավարի օգնական	4.50

»:

Հոդված 4. Օրենքի ուժի մեջ մտնելը

1. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ
«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ, «ՊԵՏԱԿԱՆ ՊԱՇՏՈՆՆԵՐ ԶԲԱՂԵՑՆՈՂ ԱՆՁԱՆՑ ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ, «ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ, «ՏԵՍՉԱԿԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀՀ ՕՐԵՆՔՆԵՐԻ ՆԱԽԱԳԾԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Նախագիծը նպատակ ունի ՀՀ կառավարության կառուցվածքը համապատասխանեցնել 2015 թվականի դեկտեմբերի 6-ին ընդունված Սահմանադրության փոփոխություններին՝ համաձայն որի նախարարների թիվը պետք է լինի տասնութը: Բացի այդ, նախագիծը նպատակաուղղված է կառավարման արդյունավետությունը բարձրացնելու եւ կառավարման ձեւը կիսանախագահականից խորհրդարանականի անցման գործընթացը սահուն անցկացնելու համար:

«Հայաստանի Հանրապետության կառավարության կառուցվածքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծով առաջարկվում է ուժը կորցրած ճանաչել օրենքի 1-ին հոդվածի 1-ին մասի 18-րդ կետը (Հայաստանի Հանրապետության կառավարության աշխատակազմի ղեկավար-նախարար): Դրանով պայմանավորված «Պետական պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության մասին», «Հանրային ծառայության մասին» եւ «Տեսչական մարմինների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքներում նախատեսված փոփոխությունների արդյունքում «ՀՀ կառավարության աշխատակազմի ղեկավար-նախարար» քաղաքական պաշտոնը փոխարինվում է «ՀՀ կառավարության աշխատակազմի ղեկավար» հայեցողական պաշտոնով՝ համապատասխանաբար փոփոխելով նաև նրա տեղակալների պաշտոնների անվանումները:

ԱՄՓՈՓԱԹԵՐԹ
ՀՀ ԱԶԳԱՅԻ ԺՈՂՈՎԻ ԿՈՂՄԻՑ ԱՌԱՋԻՆ ԸՆԹԵՐՑՄԱՄԲ ԸՆԴՈՒՆՎԱԾ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ, «ՊԵՏԱԿԱՆ ՊԱՇՏՈՆՆԵՐ ԶԲԱՂԵՑՆՈՂ ԱՆՁԱՆՑ ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ, «ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ, «ՏԵՍՉԱԿԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀՀ ՕՐԵՆՔՆԵՐԻ ՆԱԽԱԳԾԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

	Առաջարկի (փոփոխության, լրացման) հեղինակը	**Նախագծի այն մասը, որին վերաբերում է առաջարկը (փոփոխությունը, լրացումը)**	**Առաջարկը (փոփոխությունը, լրացումը)**	**Առաջարկը (փոփոխությունը, լրացումը) ընդունելու կամ մերժելու վերաբերյալ հիմնական զեկուցողի եզրակացությունը**	**Առաջարկն ընդունելու կամ մերժելու վերաբերյալ հանձնաժողովի որոշումը**
	1	**2**	**3**	**4**	
1.	Հեղինակ՝ պատգամավոր, առողջապահության և սոցիալական հարցերի մշտական հանձնաժողովի եզրակացությունում նշված առաջարկների հիման վրա	«Պետական պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ օրենքի 1-ին և 2-րդ հոդվածներ	Առաջարկվում է ՀՀ Ազգային ժողովի աշխատակազմի ղեկավարի պաշտոնային դրույքաչափը ՀՀ կառավարության աշխատակազմի ղեկավարի պաշտոնային՝ 12.00 դրույքաչափին համապատասխանեցնելու հետ մեկտեղ համապատասխանեցնել նաև ՀՀ Աժ աշխատակազմի ղեկավարի առաջին տեղակալի, տեղակալի, կորհրդականի և օգնականի պաշտոնային դրույքաչափերը նախագծով նախատեսվող ՀՀ կառավարության աշխատակազմի ղեկավարի առաջին տեղակալի, տեղակալի, խորհրդականի և օգնականի պաշտոնային դրույքաչափերին:	Առաջարկն ամբողջությամբ ընդունվել է, նախագիծը համապատասխանաբար լրամշակվել է	Առաջարկն ընդունվել է

2.	«Ելք» խմբակցություն	«Հայաստանի Հանրապետության կառավարության կառուցվածքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի 1-ին հոդված	Առաջարկվում է կառավարության հետևյալ կառուցվածքը. 1. **Ազգային անվտանգության նախարարություն** 2. **Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն** 3. **Առողջապահության նախարարություն** 4. **Արդարադատության նախարարություն** - անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեն առանձին ստորաբաժանման տեսքով ներառել արդարադատության նախարարության կազմում 5. **Արտաքին գործերի նախարարություն** - սփյուռքի նախարարությունը միացնել արտաքին գործերի նախարարութանը 6. **Բնապահպանության և գյուղատնտեսության նախարարություն**	Հաշվի առնելով, որ նախագիծը վերապահված է Կառավարության բացառիկ իրավասությանը, «Ազգային ժողովի կանոնակարգ» ՀՀ սահմանադրական օրենքի 78-րդ հոդվածի 4-րդ մասի 1-ին կետի համաձայն՝ նախագիծը քվեարկության է դրվել առանց փոփոխության:	Առաջարկը չի ընդունվել

			7. **Էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարություն** - միջուկային անվտանգության կարգավորման պետական կոմիտեն ներառել էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարության կազմում 8. **Կրթության, գիտության և մշակույթի նախարարություն** 9. **Ներքին գործերի նախարարություն** - ոստիկանությունն ու արտակարգ իրավիճակների նախարարությունը միացնել և ստեղծել ներքին գործերի նախարարություն 10. **Պաշտպանության նախարարություն** 11. **Սպորտի և երիտասարդության հարցերի նախարարություն**		

			12. Տարածքային կառավարման և զարգացման նախարարություն - քաղաքաշինության պետական կոմիտեն ներառել նախարարության կազմում **13. Տնտեսական զարգացման և ներդրումների նախարարություն** - միջազգային տնտեսական ինտեգրման և բարեփոխումների նախարարությունը ներառել տնտեսական զարգացման և ներդրումների նախարարության կազմում - պետական գույքի կառավարման վարչությունը ներառել տնտեսական զարգացման և ներդրումների նախարարության կազմում **14. Տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարություն**		

			- քաղաքացիական ավիացիայի գլխավոր վարչությունը միացնել տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարությանը **15. Ֆինանսների նախարարություն** - պետական եկամուտների կոմիտեն ներառել ֆինանսների նախարարության կազմում Միաժամանակ, առաջարկվում է փոխվարչապետին վստահել կառավարության աշխատակազմի գործունեությունը համակարգելու գործառույթը՝ չսահմանելով կառավարության աշխատակազմի ղեկավար նախարարի կամ հայեցողական կամ այլ առանձին պաշտոն:		